

ԻՆՏԵԳՐՈՒՄ-ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ
ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված
գործընկերության համաձայնագրի նշանակությունը
Հայաստանի իրավական համակարգի համար

ԱՆՆԱ ԽՎՈՐՈՍՑՅԱՆԿԻՆԱ

«Կիև-Մոսկվա ակադեմիա» ազգային համալսարան, Ուկրաինա
Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան

Հոդվածում ներկայացվում են ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) իրավական վերլուծությունն ու դրա հնարավոր ազդեցությունը Հայաստանի իրավական համակարգի վրա: ՀԸԳՀ-ն եզակի իրավական գործիք է, քանզի դրա ստորագրող կողմը միաժամանակ Արևելյան գործընկերության (ԱՂԳ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ երկիր է: ՀԸԳՀ-ն զգալիորեն տարբերվում է Գործընկերության և համագործակցության համաձայնագրերից (ԳՀՀ), որոնք կնքվել են հետխորհրդային երկրների հետ 1990-ական թվականներին և նոր սերնդի Ասոցացման համաձայնագրերից (ԱՀ), որոնք ստորագրել են Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան: Հոդվածում ուրվագծվում են ՀԸԳՀ-ի և երրորդ երկրների հետ ԵՄ այլ համաձայնագրերի միջև տարբերությունները: Ցույց է տրվում, որ ինչպես ԱՀ-ների դեպքում է, ՀԸԳՀ-ն ներառում է երկու տեսակի պայմանականության մեխանիզմներ՝ «ընդհանուր արժեքների» և «շուկայի հասանելիության» պայմանականություններ: Դրանք ծառայում են առաջին դեպքում ԵՄ արժեքները, երկրորդ դեպքում՝ ԵՄ օրենսդրությունը ներդնելու համար: Նշվում է, որ ԵՄ արժեքները Հայաստանի իրավական համակարգում ներդնելու համար ՀԸԳՀ-ի շրջանակներում կիրառվում են հետևյալ մեխանիզմները. արժեքների ներառում առանցքային տարրեր պարունակող դրույթներում, համապատասխան միջազգային համաձայնագրերին միանալու պահանջ և արժեքների կիրառման՝ որպես պայմանականության մեխանիզմի օգտագործում:

Բանալի բառեր

ԵՄ-Հայաստան հարաբերություններ, Արևելյան գործընկերություն, ՀԸԳՀ, տարածաշրջանային ինտեգրացիա, օրենսդրական մոտարկում, ընդհանուր արժեքներ

Նախաբան

Չնայած 2013թ. սեպտեմբերի իր շրջադարձին ԵԱՏՄ-ի ուղղությամբ, Հայաստանը՝ որպես ԱլԳ անդամ երկրներից մեկը, շարունակում է վարել ակտիվ երկխոսություն ԵՄ-ի հետ: Այդ համատեքստում 2017թ. նոյեմբերի 24-ի ստորագրված ՀՀԳՀ-ն¹ և ԵՄ-Հայաստան հարաբերությունների նոր ձևաչափի համար իրավական հիմքերը դարձել են Հայաստանի իրավական համակարգի եվրոպականացման կարևոր գործիք:

Ինչպես նշում է ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձրագույն ներկայացուցիչ, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Ֆ. Մոգերինին, «Նոր համաձայնագիրն իր տեսակի մեջ առաջինն է, քանզի այն կնքվում է գործընկեր պետության հետ, որը միաժամանակ Եվրասիական տնտեսական միության և Արևելյան գործընկերության անդամ է²»: ՀՀԳՀ-ն եզակի գործիք է: ԱլԳ-ի տարածաշրջանում այն զգալիորեն տարբերվում է ինչպես ԳՀՀ-ներից, որոնք կնքվել են հետխորհրդային երկրների հետ 90-ական թվականներին, այնպես էլ Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ կնքած նոր սերնդի ԱՀ-ներից:

Հայաստանը, որպես ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի հետ միաժամանակյա համագործակցություն ծավալող բացառիկ երկիր, կարող է ծառայել որպես լաբորատորիա՝ տարբեր ուղղություններ, մակարդակներ և ձևաչափ ունեցող հետխորհրդային տրանսֆորմացիայի, եվրոպա-

¹ Comprehensive and Enhanced Partnership Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part (not yet in force), *OJ L* 23, 26.01.2018, pp. 4–466, [https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:22018A0126\(01\)&qid=1523193570030](https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:22018A0126(01)&qid=1523193570030) (15.02.2018).

² ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձրագույն ներկայացուցիչ, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Ֆ. Մոգերինիի ելույթը ՀՀ արտգործնախարար Է. Նալբանդյանի հետ ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրումից հետո, Բրյուսել, նոյեմբերի 24, 2017, https://eeas.europa.eu/delegations/armenia/36208/remarks-hrvp-federica-mogherini-following-signing-european-union-armenia-comprehensive-and_en (26.11.2017):

կանացման ու տարածաշրջանային ինտեգրման գործընթացների հետազոտության և ուսումնասիրության համար: Այդ առանձնահատկությունը վերջերս ստորագրված ԵՄ-Հայաստան համաձայնագիրը դարձնում է առանձնահատուկ հետաքրքիր գիտական հետազոտության համար:

Հոդվածում ներկայացվում է ՀՀԳՀ-ի իրավական վերլուծությունը՝ որպես ԵՄ-Հայաստան հարաբերությունները կարգավորող գործիք, և նախանշվում է դրա հնարավոր ազդեցությունը Հայաստանի իրավական համակարգի վրա: Մասնավորապես, ուսումնասիրվում են ՀՀԳՀ-ի տեղը ներպետական իրավական համակարգում, գործընկերության ինստիտուցիոնալ շրջանակները, կարևոր տարրերը, ինչպես նաև ԵՄ օրենսդրությանը մոտարկման մեխանիզմները:

ՀՀԳՀ-ի տեղը ներպետական իրավական համակարգում

ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, միջազգային պայմանագրերը վավերացվում են օրենքով³: Սահմանադրության 5-րդ հոդվածը հաստատում է Հայաստանի իրավական համակարգի նորմերի հիերարխիան և սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը» (հոդված 5 (3)): Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել (հոդված 116 (3)): ՀՀ Սահմանադրական դատարանը մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը (հոդված 168 (3)):

2018թ. մարտի 16-ին ՀՀ Սահմանադրական դատարանը ՀՀԳՀ-ն դիտարկեց Սահմանադրության հետ համապատասխանության շրջանակներում և ներկայացրեց եզրակացություն, որ Սահմանադրու-

³ «Օրենքով վավերացնելու» պահանջը 2015թ. Սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության մեջ ներկայացված նորություններից է: Նախկինում միջազգային պայմանագրերը վավերացվում էին խորհրդարանական որոշումների ընդունման ճանապարհով:

թյան և Համաձայնագրի շրջանակներում ամրագրված պարտավորությունների միջև չկա որևէ հակասություն⁴: 2018թ. ապրիլի 11-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց ՀՀԳՀ-ն⁵: Համաձայնագիրը դեռևս ուժի մեջ չէ: 385-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, այն ուժի մեջ է մտնում վավերացման կամ հաստատման մասին վերջին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը: Մակայն կողմերը կարող են ժամանակավորապես կիրառել Համաձայնագիրն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ իրենց ներքին ընթացակարգերի համաձայն՝ ըստ կիրառելիության (հոդված 385 (5)):

Նպատակ ունենալով «ամրապնդել կողմերի միջև համապարփակ քաղաքական և տնտեսական գործընկերությունն ու համագործակցությունը՝ ընդհանուր արժեքների և սերտ կապերի հիման վրա՝ այդ թվում մեծացնելով Հայաստանի Հանրապետության մասնակցությունը Եվրոպական միության քաղաքականությանը, ծրագրերին և գործակալությունների աշխատանքներին»⁶ ՀՀԳՀ-ն փոխարինում է 1996թ. ստորագրված ԳՀՀ-ին⁷: Ակնկալվում է, որ նոր Համաձայնագիրը «կամրապնդի [ԵՄ-Հայաստան] համագործակցությունը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկան, տրանսպորտը և շրջակա միջավայրը, կհանգեցնի աճող շարժունակության» և «կօգնի ստեղծել բարենպաստ գործարար միջավայր և նոր հնարավորություններ՝ առևտրի ու ներդրումների ոլորտում»⁸: Համաձայնագրի իրականա-

⁴ 2017 թվականի նոյեմբերի 24-ին Բյուրսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության մի կողմից, և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ Սահմանադրական դատարանի 2017թ. մարտի 16-ի որոշում (ՄԴՈ-1407),

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120651>:

⁵ National Assembly of Armenia ratified Armenia-EU new framework agreement, Press Release, 11.04.2018, http://www.mfa.am/en/press-releases/item/2018/04/11/dfm_na_cepa/ (11.04.2018).

⁶ ՀՀԳՀ-ի հոդված 1 (ա):

⁷ ՀՀԳՀ-ի հոդված 380:

⁸ ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության...

ցումը կոչուրացվի 2018թ. փետրվարի 21-ին ստորագրված «ԵՄ-Հայաստան գործընկերության առաջնահերթությունների» միջոցով⁹: Այդ փաստաթուղթը կփոխարինի «փափուկ իրավունքի» մեկ այլ փաստաթղթի՝ 2006թ. ընդունված ԵՀՔ գործողությունների պլանին, և «կձևավորի քաղաքական երկխոսության հարցերով կանոնավոր հանդիպումների և ոլորտային երկխոսությունների օրակարգը, ինչպես սահմանված է նոր Համաձայնագրով¹⁰»: Լինելով համահունչ ԵՀՔ-ի վերանայման փաստաթղթում ամրագրված առաջնահերթություններին¹¹ և արտացոլելով ՀՀԳՀ-ի հիմնական ուղղությունները՝ Գործընկերության առաջնահերթությունները ներառում են 1) ինստիտուտների ամրապնդում և լավ կառավարում, 2) տնտեսական զարգացում և շուկայական հնարավորություններ, 3) կապի, էլեկտրաէներգիայի արդյունավետություն, շրջակա միջավայրի և կլիմայի առնչությամբ գործողություններ, 4) շարժունակություն և մարդկային շփումներ:

Ինչպես արդեն նշվել է, Համաձայնագրի առանձնահատկություններից մեկն այն է, որ այն կնքվել է այլ տնտեսական ինտեգրման կառույցին՝ ԵԱՏՄ-ին, Հայաստանի անդամակցության պայմաններում: Կոստան-յանը և Գիրագոսյանը նշում են, որ ՀՀԳՀ-ի շուրջ բանակցողները հիմնվում են ձախողված ԵՄ-Հայաստան ասոցացման համաձայնագրի նախագծի տեքստի վրա¹²՝ այն համապատասխանեցնելով ԵՄ-Հայաստան հարաբերությունների նոր ձևաչափին:

⁹ European Union and Armenia sign Partnership Priorities, Bruxelles, 21/02/2018 - 14:17, UNIQUE ID: 180221 5, https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/40181/european-union-and-armenia-sign-partnership-priorities_en (01.03.2018).

¹⁰ Recommendation No 1/2017 of the EU-Armenia Cooperation Council of 20 November 2017 on the EU-Armenia Partnership Priorities [2018/315], *OJ L* 60, 02.03.2018, pp. 51–55, <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?qid=1522643453339&uri=CELEX:22018D0315> (15.03.2018).

¹¹ Joint Communication to the European Parliament, the Council, The European Economic and Social Committee and the Committee of the Regions. Review of the European Neighbourhood Policy, 18.11.2015 JOIN (2015) 50 final, http://eeas.europa.eu/archives/docs/enp/documents/2015/151118_joint-communication_review-of-the-enp_en.pdf (01.03.2018).

¹² **Kostanyan H., Giragosian R.**, EU-Armenian Relations: Charting a Fresh Course (November 15, 2017). *CEPS Research Report* No. 2017-14, November 2017, p. 12, <https://ssrn.com/abstract=3075166> (30.03.2018).

Ուստի, ՀԸԳՀ-ի «քաղաքական երկխոսության» մասը նման է ԵՄ-Հայաստան ԱՀ-ին, իսկ դրա «տնտեսական մասը», ի տարբերություն ԱՀ-ների, չի նախատեսում Խորը եւ համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) ստեղծում՝ ԵԱՏՄ-ի մասին համաձայնագրով Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների պատճառով: Դա ոչ միայն նվազեցնում է տնտեսական ինտեգրման մակարդակը և նեղացնում է կողմերի միջև տնտեսական համագործակցության շրջանակը, այլև զգալիորեն ազդում է ՀԸԳՀ-ի պայմանականության մեխանիզմների վրա՝ վերացնելով ԵՄ ներքին շուկային աստիճանական ինտեգրման խթանները, ինչպես նախատեսված է ԱՀ-ներով:

Թեև նոր Համաձայնագրով «լիարժեք հաշվի է առնվում Հայաստանի՝ որպես Եվրասիական տնտեսական միության անդամի, պարտավորությունները»¹³, այդուհանդերձ չի բացառվում ԵԱՏՄ-ի նորմերի և ՀԸԳՀ-ի դրույթների միջև հակասությունների հնարավորությունը¹⁴:

Մեկ այլ կարևոր խնդիր է ՀԸԳՀ-ի շրջանակներում ձևավորված ինստիտուտների որոշումների տեղը Հայաստանի իրավական համակարգում: Ինչպես կներկայացվի ստորև, ՀԸԳՀ-ի շրջանակներում ստեղծված երկու մարմինները (Գործընկերության խորհուրդը և Գործընկերության կոմիտեն) իրավունք ունեն կայացնել պարտադիր որոշումներ: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ 1) Խորհրդի որոշումները, որոնց հիման վրա պետք է վերանայվեն ՀԸԳՀ-ի

¹³ Joint Proposal for a Council Decision on the signing, on behalf of the European Union, and provisional application of the Comprehensive and Enhanced Partnership Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part, <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?qid=1511682870752&uri=CELEX:52017JC0036>

¹⁴ Հատկանշական է, որ բանակցությունների ժամանակ ՀԸԳՀ-ի հիմքում ընկած արժեքների կայունությունը ապահովելու նպատակով ԵՄ-ն մերժեց հայկական կողմի առաջարկած «բացառության դրույթը», ինչը թույլ կտար Հայաստանին հրաժարվել ՀԸԳՀ-ով ամրագրված պարտավորությունների կատարումից այն ոլորտներում, որոնցում Եվրասիական տնտեսական միությունը կարող է ընդունել նոր դրույթներ: (**Kostanyan H., Giragosian R.**, նշվ. աշխ., էջ 7):

հավելվածները՝ ԵՄ օրենսդրությանը մոտարկման նպատակով (հոդված 371) և 2) այլ որոշումներ: Ըստ Հայաստանի սահմանադրական իրավունքի, առաջին տեսակի որոշումների իրականացումը ենթադրում է փոփոխությունների վավերացում հավելվածներում այն նույն սկզբունքով, որը գործում է Համաձայնագրի դեպքում¹⁵ (այդ թվում՝ Սահմանադրական դատարանի նախնական վերահսկողություն):

Ինչ վերաբերում է երկրորդ տեսակի որոշումներին, ՀՀ Սահմանադրության մեջ չկա որևէ դրույթ, որը կհաստակեցնի միջազգային համաձայնագրերով ստեղծված մարմինների գործողությունների տեղը ներպետական իրավական համակարգում: ՀՀԳՀ-ի ինստիտուտների ընդունած որոշումների դեպքում կիրառելի են ԵԱՏՄ-ի մասին համաձայնագրի առնչությամբ Սահմանադրական դատարանի ձևակերպած իրավական դրույթները: Մասնավորապես, 2014թ. հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության» «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2014թ. նոյեմբերի 14-ի ՄԴՌ-1175 որոշման մեջ¹⁶ ՀՀ դատարանն ընդգծում էր հստակ սահմանադրական պահանջների առկայությունը Հայաստանի իրավական համակարգում միջազգային/վերազգային կազմակերպությունների ակտերի առնչությամբ: Ի հավելումն ինքնիշխանության, իրավահավասարության և միջազգային համագործակցության փոխադարձ նպատակահարմար-

¹⁵ 2017 թվականի նոյեմբերի 24-ին Բյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության..., 11-րդ պարբերություն:

¹⁶ 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության» «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ Սահմանադրական դատարանի 2014թ. նոյեմբերի 14-ի որոշում,

<http://www.concourt.am/armenian/decisions/common/2014/pdf/sdv-1175.pdf>

րության, Դատարանը 1) ընդգծում էր, որ մարդու իրավունքների սահմանափակումները [վերազգային կազմակերպություններում մասնակցության արդյունքում] պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, 2) ճանաչում էր վերապետական մարմինների որոշումների գործողության հնարավորությունը միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության շրջանակներում¹⁷: Դատարանը ձևակերպեց ընդհանուր կիրառելիության իրավական դիրքորոշումը, ըստ որի «Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ որևէ վերապետական մարմնի ընդունած ցանկացած որոշում, որը չի համապատասխանում այդ պահանջներին, կիրառելի չէ Հայաստանի Հանրապետությունում: Իսկ այդ պահանջների պահպանման պարագայում Հայաստանի Հանրապետության համագործակցությունն այս կամ այն տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպության հետ չի կարող առաջացնել սահմանադրականության խնդիր»¹⁸:

2017 թվականի ապրիլի 11-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2017 թ. հոկտեմբերի 10-ի ՄԴՈ-1381 որոշման¹⁹ մեջ Սահմանադրական դատարանն առանձնացնում էր միջազգային և վերազգային բնույթի իրավական ակտեր: Առաջին դասի ակտերով կարգավորվում են միջազգային իրավունքի սուբյեկտների միջև «հորիզոնական» հարաբերությունները, երկրորդ դասի ակտերով՝ պետությունների և պետության ներսում գործող սուբյեկտների միջև

¹⁷ 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում..., 7-րդ պարբերություն:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ 2017 թվականի ապրիլի 11-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2017 թ. հոկտեմբերի 10-ի ՄԴՈ-1381 որոշում, <http://concourt.am/armenian/decisions/common/2017/pdf/sdv-1381.pdf> (13.11.2017):

«ուղղահայաց» հարաբերությունները՝ այդպիսով ուղղակիորեն ազդելով անհատների վրա: Ուստի, վերազգային ակտերը դրանց կիրառման գործընթացում կարող են խախտել սահմանադրական իրավունքները: Այդ ակտերի սահմանադրականության գնահատումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կա վերազգային ակտերի կիրառման պրակտիկա²⁰:

Ինչ վերաբերում է ՀԸԳՀ-ի ինստիտուտների ընդունած որոշումների փոխկապակցվածությանը ներպետական օրենսդրության հետ, ապա կարելի է կիրառել «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի անալոգը, որը կարգավորում է միջազգային կազմակերպությունների ընդունած իրավական ակտերի կարգավիճակը: Ըստ այդ հոդվածի, միջազգային կազմակերպությունների ակտերը պետք է կիրառվեն կազմակերպության հիմնադրման մասին համաձայնագրին համապատասխան, և դրանց իրավական ուժը սահմանվում է այդպիսի պայմանագրերով: Եթե սահմանվում է, որ այդ ակտերը պարտադիր են, ապա ըստ 55-րդ հոդվածի 3-րդ կետի պատասխանատու գերատեսչությունը ապահովում է դրանց կատարումը, անհրաժեշտության դեպքում՝ 1) ընդունելով համապատասխան նորմատիվ գերատեսչական կամ այլ իրավական ակտ, 2) մշակելով Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի (կարգադրության), կառավարության կամ վարչապետի որոշման նախագիծ և սահմանված կարգով ներկայացնելով կառավարության քննարկմանը: Եթե ՀՀ գործող օրենսդրության և միջազգային կազմակերպությունների ընդունած որոշումների միջև կա հակասություն, վերջինս կիրառելի չէ այնքան ժամանակ, քանի դեռ ներպետական իրավական ակտում չեն կատարվել անհրաժեշտ փոփոխություններ: Այս դրույթի մեկնաբանությունը 55-րդ հոդվածի այլ դրույթների հետ թույլ է տալիս եզրակացնել, որ այդ դեպքում պահանջվող օրենսդրական ակտերի ընդունումը պարտադիր է պետական իշխանությունների համար:

²⁰ 2017 թվականի ապրիլի 11-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության..., 5-րդ պարբերություն:

Ինստիտուցիոնալ շրջանակներ

ԵՄ-Հայաստան հարաբերությունների ինստիտուցիոնալ շրջանակը կարգավորվում է ՀՀԳՀ-ի 8-րդ մասով: Հիմնական մարմիններն են Գործընկերության խորհուրդը, Գործընկերության կոմիտեն, ենթակոմիտեները և Գործընկերության կոմիտեին օժանդակող այլ մարմիններ՝ Խորհրդարանական գործընկերության կոմիտեն և Քաղաքացիական հասարակության հարթակը: ՀՀԳՀ-ի ինստիտուցիոնալ շրջանակը նման է ԱՀ-ների ինստիտուցիոնալ շրջանակին²¹:

ՀՀԳՀ-ի 362-րդ հոդվածի համաձայն, **Գործընկերության խորհուրդը** վերահսկում և պարբերաբար դիտարկում է Համաձայնագրի կիրառումը: Այդ մարմինը կազմված է Կողմերի նախարարական մակարդակով ներկայացուցիչներից և հանդիպում է տարին առնվազն մեկ անգամ և երբ հանգամանքներն են պահանջում: Գործընկերության խորհուրդը կարող է հանդիպել ցանկացած կազմով՝ փոխադարձ համաձայնությամբ: Այն ուսումնասիրում է Համաձայնագրի շրջանակներում ծագած ցանկացած էական նշանակություն ունեցող հարց և փոխադարձ հետաքրքրություն ունեցող երկկողմ կամ միջազգային բնույթի այլ հարցեր՝ Համաձայնագրի նպատակներն իրագործելու համար: Գործընկերության խորհուրդում հաջորդաբար նախագահում են Եվրոպական միության ներկայացուցիչը և Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը:

Հատկանշական է, որ նույն հոդվածով, Գործընկերության խորհուրդն ունի Համաձայնագրի շրջանակներում Կողմերի համար **պարտադիր որոշումներ** ընդունելու լիազորություն սահմանված դեպքերում: Խորհուրդը կարող է նաև ներկայացնել

²¹ Բացառությամբ գազաթափողովի բարձր մակարդակի հանդիպումները, որոնք ընդհանուր ուղեցույց են ԵՄ-Ուկրաինա ԱՀ-ի իրականացման համար, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող երկկողմ և միջազգային խնդիրների քննարկման հնարավորություն (ԵՄ-Ուկրաինա ԱՀ-ի հոդված 460 (1)): ԵՄ-Հայաստան ԱՀ-ի 404-րդ հոդվածը սահմանում է, որ պարբերական բարձր մակարդակի քաղաքական երկխոսություն է տեղի ունենալու Կողմերի ներկայացուցիչների միջև նախարարական մակարդակով՝ փոխադարձ համաձայնությամբ:

առաջարկություններ: Այն իր որոշումներն ու առաջարկություններն ընդունում է Կողմերի միջև համաձայնությամբ՝ պահպանելով Կողմերի համապատասխան ներքին ընթացակարգերի կատարման գործընթացը: Գործընկերության խորհուրդն ունի նաև հավելվածները թարմացնելու կամ փոփոխելու լիազորություն՝ առանց հակասելու Համաձայնագրի 6-րդ մասով սահմանված հատուկ դրույթներին:

Այդ մարմինը ծառայում է որպես Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության՝ մշակման փուլում գտնվող և գործող օրենսդրության, ու դրանց կիրառման, իրականացման և համապատասխանության ապահովման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հարթակ (362-րդ հոդված): Ուստի, կարելի է եզրակացնել, որ Գործընկերության խորհուրդը կարող է ունենալ զգալի դերակատարություն օրենսդրությունների մոտարկման գործընթացի արդյունավետության ուղղորդման և ապահովման գործում:

ՀԸԳՀ-ի 363-րդ հոդվածը սահմանում է, որ **Գործընկերության կոմիտեն** աջակցում է Գործընկերության խորհրդին՝ իր պարտականությունների և գործառույթների կատարման հարցում: Այն կազմված է Կողմերի բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով ընտրված ներկայացուցիչներից: Կոմիտեն հանդիպում է առնվազն տարեկան մեկ անգամ: Գործընկերության խորհուրդը Գործընկերության կոմիտեին կարող է պատվիրակել իր ցանկացած լիազորություն, այդ թվում՝ կատարման համար պարտադիր որոշումներ ընդունելու լիազորությունը: Այդ մարմինը կարող է ընդունել նաև պարտադիր որոշումներ՝ Համաձայնագրով նախատեսված դեպքերում: Որոշումներն ընդունվում են Կողմերի միջև համաձայնությամբ՝ պահպանելով Կողմերի համապատասխան ներքին ընթացակարգերի կատարման գործընթացը:

Գործընկերության կոմիտեն հանդիպում է տարին մեկ անգամ կոնկրետ ձևաչափով՝ քննարկելու 6-րդ գլխին վերաբերող բոլոր հարցերը (առևտուր և առևտրին առնչվող հարցեր):

Ինչպես սահմանում է ՀԸԳՀ-ի 364-րդ հոդվածը, Գործընկերության կոմիտեին աջակցում են Համաձայնագրի շրջանակներում ստեղծված ենթակոմիտեները և մյուս մարմինները: Վերջինս ներառում

է, օրինակ, Մաքսային հարցերով ենթակումիտեն (հոլված 126) և Աշխարհագրական նշումների հարցով ենթակումիտեն (հոլված 240):

ՀԸԳՀ-ի 365-րդ հոդվածի համաձայն, խորհրդարանական գործընկերության կումիտեն կազմված է մի կողմից՝ Եվրոպական խորհրդարանի անդամներից, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի անդամներից, և նրանց համար ծառայում է հանդիպումների և կարծիքներ փոխանակելու հարթակ: Կումիտեն կարող է առաջարկություններ ներկայացնել Գործընկերության խորհրդին և ստեղծել խորհրդարանական գործընկերության ենթակումիտեններ:

Համաձայնագրում ընդգծվում է քաղաքացիական հասարակության և քաղաքացիական հասարակության երկխոսության կարևորությունը դրա իրականացման համար: Համաձայնագրում հստակորեն նշվում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավման կարևորությունը Հայաստանի Հանրապետության զարգացման քաղաքականության մշակման և բարեփոխումների գործընթացում, ինչպես նաև Կողմերի միջև համագործակցության խթանման գործում (Զբաղվածության, սոցիալական քաղաքականության և հավասար հնարավորությունների վերաբերյալ 15-րդ գլխի 86-րդ հոդված): Համաձայնագրի 5-րդ մասի 21-րդ գլուխը նվիրված է Հայաստանի և ԵՄ-ի քաղաքացիական հասարակությունների համագործակցությանը և սահմանում է պարբերական երկխոսությունն այդ հարցերի վերաբերյալ (ՀԸԳՀ-ի 104-րդ հոդված):

Քաղաքացիական հասարակության հարթակը ստեղծվել է ՀԸԳՀ-ի իրականացման գործում քաղաքացիական հասարակությունների ներգրավումը հնարավոր դարձնելու համար: Ըստ 366-րդ հոդվածի 2-րդ կետի, Քաղաքացիական հասարակության հարթակը ձևավորվել է որպես հանդիպումների և կարծիքների փոխանակման հարթակ և կազմված է Եվրոպական միության քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, այդ թվում՝ Եվրոպական տնտեսական և սոցիալական հարցերով կումիտեի անդամներից, և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ցանցերի և հարթակների, այդ թվում՝ Արևելյան գործընկերության ազգային հարթակի ներկայացուցիչներից: 366-րդ հոդվածը սահմանում է Քաղաքացիական հասարակության

հարթակի և այլ ինստիտուտների համագործակցության ձևերը (Տեղեկատվության և տեսակետների փոխանակում (հոդված 366 (5), 366 (7)); խորհրդատվության տրամադրում Քաղաքացիական հասարակության հարթակի կողմից Գործընկերության խորհրդին, Գործընկերության կոմիտեին և Խորհրդարանական գործընկերության կոմիտեին (հոդված 366 (6)): ՀԸԳՀ-ի 284-րդ հոդվածում առանձնահատուկ նշվում է, որ ԵՄ-ի և Հայաստանի միջև առևտրային հարաբերությունների համատեքստում առաջացող կայուն զարգացման հարցերի շուրջ համագործակցությունը և երկխոսությունն «ընդգրկում են համապատասխան շահագրգիռ կողմեր, մասնավորապես, սոցիալա-կան գործընկերներ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ կազմակերպություններ, հատկապես, 366-րդ հոդվածի համաձայն ստեղծված Քաղաքացիական հասարակության հարթակի միջոցով»:

ՀԸԳՀ-ի պայմանականության մեխանիզմները և կարևոր տարրերը

ՀԸԳՀ-ի ինստիտուցիոնալ շրջանակը զգալիորեն ավելի զարգացած է, քան ԳՀՀ-ն և նման է ԱՀ-ների ինստիտուցիոնալ շրջանակին:

Շիմմելֆեննիգի և Սեդելմեյերի սահմանման համաձայն, պայմանականության քաղաքականության դեպքում միջազգային կազմակերպությունները խոստանում են պարզներ (օրինակ, ֆինանսական օժանդակություն կամ անդամակցություն) թիրախային պետություններին այն պայմանով, որ վերջիններս կատարեն իրենց առաջադրած մեկ կամ ավել պայմանները (օրինակ, քաղաքականության կամ ինստիտուցիոնալ փոփոխություններ)²²: ԵՄ-ի պայմանականության քաղաքականության հիմքում պարզների դիմաց գործարքային ռազմավարությունն է²³:

²² Schimmelfennig F., Sedelmeier U., Candidate Countries and Conditionality. In: *Europeanization. New Research Agendas*, Ed. by Graziano & Vink, Palgrave Macmillan UK, 2008, pp. 88-101, p. 88.

²³ Schimmelfennig F., Sedelmeier U., Governance by Conditionality: EU Rule Transfer to the Candidate Countries of Central and Eastern Europe, *Journal of European Public Policy*, August 2004, 11, 4, 661-679, p. 662.

Ինչպես Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ԱՀ-ների դեպքում է, ՀԸԳՀ-ի շրջանակներում կարելի է առանձնացնել երկու տեսակի պայմանականություն՝ «ընդհանուր արժեքների»²⁴ պայմանականություն և «շուկայի հասանելիության»²⁵ պայմանականություն: Պայմանականության այդ երկու տեսակները ծառայում են առաջին դեպքում՝ ԵՄ արժեքները, երկրորդ դեպքում՝ ԵՄ օրենսդրությունն (իրավական նորմերի համախումբը) ներդնելու համար²⁶:

Պոլին առանձնացնում է արտաքին գործողությունների չորս միջոց, որով ԵՄ-ն կարող է խթանել իր արժեքները. 1) դրանք համարելով որպես գործընկեր երկրների հետ կնքած իրավաբանորեն պարտադիր համաձայնագրերի «կարևոր տարրեր» և կիրառելով «չիրագործման դրույթ» դրանց խախտման դեպքում, 2) խրախուսելով երրորդ երկրներին վավերացնել և իրականացնել իրավաբանորեն պարտադիր բազմակողմ համաձայնագրեր՝ ունիվերսալ արժեքների հիման վրա, 3) արժեքները դարձնելով ԵՄ-ից ֆինանսական օժանդակություն ստանալու նախապայման (մասնավորապես՝ Եվրոպական հարևանության մեխանիզմի շրջանակներում), 4)

²⁴ «Ընդհանուր արժեքների» գաղափարն օգտագործվում է ԵՀԲ-ի համատեքստում (*European Neighbourhood Policy. Strategy Paper COM(2004) 373 final*) և առանձնահատուկ ընդգծվում է ԱլԳ անդամ երկրների հետ նոր համաձայնագրերում: ԵՄ-ի և երրորդ երկրների միջև հարաբերությունների ավելի լայն համատեքստում կիրառվում են «քաղաքական» կամ «մարդու իրավունքների» պայմանականության մեխանիզմները (Համայնքի և երրորդ երկրների միջև կնքված համաձայնագրերում ժողովրդավարական սկզբունքների ու մարդու իրավունքների հարգանքի մասին կոմյունիկե, Բրյուսել, մայիսի 23, 1995, COM(95)216):

²⁵ **Petrov R., Van der Loo G., Van Elsuwege P.**, The EU-Ukraine Association Agreement: A New Legal Instrument of Integration Without Membership? *Kyiv-Mohyla Law and Politics Journal*, 2015, 1 1–19, http://ekmair.ukma.edu.ua/bitstream/handle/123456789/7874/Petrov_The_EU-Ukraine_Association.pdf?sequence=1&isAllowed=y; **Petrov R.**, EU values in integration-oriented agreements with Ukraine, Moldova and Georgia. In: *The European Neighbourhood Policy – Values and Principles*, Ed. by Sara Poli, Routledge, 2016.

²⁶ **Kochenov D.**, The Issue of Values. In: Roman Petrov and Peter Van Elsuwege (eds.), *The Application of EU Law in the Eastern Neighbourhood of the European Union*, London, Routledge, 2014, pp. 46-62.

կիրառելով պատժամի-ջոցներ ժողովրդավարության նկատմամբ հարգանքի ձախողման դեպքում²⁷:

Արժեքների խթանման համատեքստում ՀԸԳՀ-ն հենվում է առաջին, երկրորդ²⁸ և երրորդ ձևերի վրա, սակայն երրորդ ձևը պետք է դիտարկվի ավելի լայն շրջանակներում, քան Պոլիի առաջարկած դասակարգման դեպքում է: Դա կարելի է սահմանել արժեքների՝ որպես նախապայմանի, օգտագործում պայմանականության մեխանիզմների շրջանակում (որի խթաններն, ակնհայտորեն, չեն կարող սահմանափակվել միայն ֆինանսական աջակցությամբ²⁹): Համաձայնագրի 2-րդ հոդվածի համաձայն, ՀԸԳՀ-ի հիմնական սկզբունքներն են.

1. Ժողովրդավարական սկզբունքների, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը՝ ամրագրված, մասնավորապես, ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ, ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտում և 1990 թվականի Նոր Եվրոպայի փարիզյան խարտիայում, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ համապատասխան այլ փաստաթղթերում, ինչպես օրինակ՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, կազմում են Կողմերի ներքին և արտաքին քաղաքականության հիմքը և համաձայնագրի կարևոր տարրը:

²⁷ **Poli S.**, Introduction. In: *The European Neighbourhood Policy – Values and Principles*. Routledge, 2016, p. 2.

²⁸ Երկրորդ ձևի օրինակ է ՀԸԳՀ-ի 6-րդ հոդվածը, որում ընդգծվում է խաղաղության ու միջազգային արդարադատության արժեքները և պահանջվում է վավերացնել և իրականացնել Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտը և դրան առնչվող փաստաթղթերը հաշվի առնելով Կողմերի իրավական ու սահմանադրական շրջանակները:

²⁹ Թեև «ֆինանսական աջակցության» խթանի վրա հիմնված պայմանականության մասին նշվում է նաև ՀԸԳՀ-ում: Համաձայնագրի 344-րդ հոդվածում նշվում է, որ ԵՄ-ի կողմից Հայաստանին տրամադրվող ֆինանսական աջակցության չափը սահմանելիս հաշվի են առնվում Հայաստանի Հանրապետության կարիքները, ոլորտների հնարավորությունները և, մասնավորապես, Համաձայնագրով նախատեսված ոլորտներում բարեփոխումների առաջընթացը:

2. Կողմերը վերահաստատում են ազատ շուկայական տնտեսության սկզբունքների, կայուն զարգացման, տարածաշրջանային համագործակցության և արդյունավետ բազմակողմ քաղաքականության վերաբերյալ իրենց հանձնառությունը:
3. Կողմերը վերահաստատում են արդյունավետ կառավարման սկզբունքների, ինչպես նաև իրենց միջազգային պարտավորությունների, մասնավորապես՝ ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորությունների նկատմամբ հարգանքը:
4. Կողմերը պարտավորվում են պայքարել կոռուպցիայի, անդրազգային կազմակերպված հանցավորության և ահաբեկչության տարբեր տեսակների դեմ, խթանել կայուն զարգացումը, արդյունավետ բազմակողմ քաղաքականությունը, պայքարել զանգվածային ոչնչացման զենքերի տարածման ու դրանց մատակարարման համակարգերի դեմ, այդ թվում՝ ԵՄ քիմիական, կենսաբանական, ճառագայթային և ատոմային ռիսկերի նվազեցման կենտրոնի Գերազանցության նախաձեռնության միջոցով: Այս հանձնառությունը Կողմերի միջև հարաբերությունների ու համագործակցության զարգացման առանցքային գործոն է և նպաստում է տարածաշրջանային խաղաղությանն ու կայունությանը:

Ի՞նչ է նշանակում «կարևոր տարրի» (հոդված 2(1))

կարգավիճակ: Ըստ 1969թ. միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի հոդված 60 (3)(բ)-ի, պայմանագրի առարկան կամ նպատակն իրականացնելու համար կարևոր դրույթի խախտումը պայմանագրի խախտում է: Ինչպես նշվում է Կոնվենցիայի 60-րդ հոդվածի 1-ին կետով, «Երկկողմ պայմանագրի էական խախտումը մասնակիցներից մեկի կողմից մյուսին իրավունք է տալիս վկայակոչել այդ խախտումը պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարեցնելու կամ այն կասեցնելու համար»: Հիմք ընդունելով այդ դրույթների հիմնավորումը՝ երրորդ երկրների հետ ԵՄ համաձայնագրերում կարևոր տարրեր պարունակող դրույթները

սովորաբար ուղեկցվում են ոչ կատարողական դրույթներով³⁰: Բացի այդ, նախաբանում ընդգծվում է «հանձնառությունների» կարևորությունը կարևոր տարրեր պարունակող դրույթների շրջանակում:

Հոդված 2(1)-ը սահմանում է ժողովրդավարական սկզբունքները, իրավունքի գերակայությունը³¹, մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները՝ որպես Համաձայնագրի *կարևոր տարրեր*: Այն պարունակում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտի միջազգային փաստաթղթերի լայնածավալ ցանկ («կոշտ» և «փափուկ» իրավունքի³²), որին Կողմերը, ըստ Համաձայնագրի, պետք է հավատարիմ մնան իրենց ներքին և արտաքին քաղաքականությունն իրականացնելիս: Թեև ազատ շուկայական տնտեսության, կայուն զարգացման, տարածաշրջանային համագործակցության, արդյունավետ բազմակողմանիության, լավ կառավարման և միջազգային պարտավորությունների նկատմամբ հարգանքի սկզբունքները ներառված չեն կարևոր տարրերի դրույթում, այդուհանդերձ դրանք ունեն հիմնարար նշանակություն Համաձայնագրի շրջանակում զարգացող հարաբերությունների համար:

Մեկ այլ կարևոր տարր ներառված է Չանգվածային ոչնչացման գենքերի, դրանց չտարածման և զինաթափման վերաբերյալ ՀԸԳՀ-ի 9-րդ հոդվածում³³: Այդ տարրը երրորդ երկրների հետ ԵՄ

³⁰ **Hachez N.** ‘Essential elements’ clauses in EU trade agreements making trade work in a way that helps human rights? *Working Paper* No. 158, April 2015, https://ghum.kuleuven.be/ggs/publications/working_papers/2015/158hachez.

³¹ ՀԸԳՀ-ի 12-րդ հոդվածում իրավունքի գերակայությունը նշվում է որպես Կողմերի միջև համագործակցության հիմք ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտներում: Այդ հոդվածի համաձայն, իրավունքի գերակայության ամրապնդումը ներառում է «դատական համակարգի անկախությունը, արդարադատության մատչելիությունը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված արդար դատաքննության իրավունքը և քրեական գործերով ու տուժողների իրավունքների դատավարական երաշխիքները»:

³² **Ghazaryan N.**, A new generation of human rights clauses? The case of Association Agreements in the Eastern neighbourhood, *European Law Review*, 2015, 40, 3, 391-410, <http://eprints.nottingham.ac.uk/34536/1/Human%20Rights%20Clauses.pdf>.

³³ ՀԸԳՀ-ի 9-րդ հոդվածի համաձայն, «Կողմերը համարում են, որ ԶՈԶ-երի տարածումը և դրանց մատակարարման միջոցները՝ թե՛ պետական և թե՛

համաձայնագրերի համար օրինաչափ է: Ինչպես նշում է Կրեմոնան, 2003 թվականից սկսած զանգվածային ոչնչացման զենքերի մասին դրույթը սկսել է ներառվել նման փաստաթղթերում³⁴: «Կարևոր տարրերի» մասին նշվում է նաև Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ կնքած ԱՀ-ներում³⁵:

ՀԸԳՀ-ի 379-րդ հոդվածը վերաբերում է պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող միջոցներին: Պարտավորությունների կատարման ձախողման դեպքում մյուս կողմը կարող է ձեռնարկել համապատասխան միջոցներ, եթե վիճակվող հարցը չի լուծվում վեճի լուծման պաշտոնական պահանջի մասին ծանուցելուց հետո երեք ամսվա ընթացքում: Միաժամանակ, խորհրդակցության անցկացման համար նախատեսված եռամսյա ժամկետի վերաբերյալ պահանջը չի կիրառվում Համաձայնագրի կարևոր տարրերից որևէ մեկի խախտման դեպքում (հոդված 379(1) և (3)): 379-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, «Համապատասխան միջոցներ ընտրելիս նախապատվությունը տրվում է այն միջոցներին, որոնք նվազագույն չափով են խաթարում Համաձայնագրի գործողությունը... Այդպիսի միջոցները չեն կարող ներառել Համաձայնագրի դրույթներով նախատեսված՝ 6-րդ մասով սահմանված իրավունքների կամ պարտավորությունների կասեցումը (առևտրին կամ առևտրին առնչվող հարցեր)»՝ բացառությամբ կարևոր դրույթի խախտման դեպքերի:

ոչ պետական դերակատարներին, ինչպիսիք են ահաբեկիչները և մյուս հանցավոր խմբերը, ամենալուրջ սպառնալիքներից են միջազգային խաղաղության և կայունության համար: Հետևաբար, Կողմերը համաձայնում են համագործակցել ՋՈՋ-երի տարածման և դրանց մատակարարման միջոցների դեմ պայքարի մասով և նպաստել դրան՝ լիարժեք համապատասխանելով զինաթափման և չտարածման վերաբերյալ միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի ներքո իրենց ստանձնած պարտավորություններին և ազգային մակարդակով կատարելով դրանք, ինչպես նաև այլ համապատասխան միջազգային պարտավորությունները: Կողմերը համաձայնում են, որ այս դրույթը Համաձայնագրի կարևոր տարր է»:

³⁴ **Cremona M.**, The ENP and Multilateralism, In: Sara Poli (ed.) European Neighbourhood Policy – Values and Principles, Routledge, 2016, pp. 85-86.

³⁵ ԵՄ-Վրաստան ԱՀ-ի 10-րդ հոդված, ԵՄ-Մոլդովա ԱՀ-ի 9-րդ հոդված, ԵՄ-Ուկրաինա ԱՀ-ի 11-րդ հոդված:

Վերոնշյալ դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ կարևոր տարրեր պարունակող դրույթները՝ չկատարման մասին դրույթի և նախաբանում հիշատակվող Կողմերի հանձնառությունների հետ միասին, կազմում են արժեքային պայմանականության մեխանիզմներից մեկը: Դրա համաձայն ՀԸԳՀ-ի բոլոր դրույթները (այդ թվում՝ տնտեսական համագործակցության և առևտրային հարաբերությունների վերաբերյալ դրույթները) գործարկվում են արդյունավետ միայն այն դեպքում, երբ կողմերը հարգում են կոնկրետ սկզբունքներ:

Համաձայնագրի քաղաքական մասում պայմանականության մեկ այլ մեխանիզմ ամրագրված է 15-րդ հոդվածում, որի համաձայն Կողմերը պարտավոր են լիարժեք կիրառել վիզաների դյուրացման և հետընդունման մասին համաձայնագրերը: Կողմերը կդիտարկեն վիզաների ազատականացման շուրջ երկխոսություն սկսելու հարցը՝ պայմանով, որ վերոնշյալ պարտավորությունները կատարվեն և արդյունավետ կառավարվող ու անվտանգ շարժունակության վերաբերյալ պայմանները գործեն: Հաշվի առնելով ԱԳ-ի գործընկեր-երկրների փորձը վիզաների ազատականացման ուղղությամբ, վերջինիս վերաբերյալ երկխոսությունը, բացի անվտանգության չափանիշներից, կկենտրոնանա նաև հիմնարար իրավունքներին առնչվող չափանիշների վրա³⁶:

Ինչպես արդեն նշվել է, ՀԸԳՀ-ի քաղաքական մասը վերարտադրում է ԵՄ-Հայաստան ձախողված ԱՀ-ն և, որոշ վերապահումներով, նման է Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ կնքված ԱՀ-ներին: Մակայն դա չի վերաբերում Համաձայնագրի տնտեսական մասին և «շուկայի հասանելիության» պայմանականության համապատասխան մեխանիզմներին: Հաշվի առնելով ԽՀԱԱԳ-ի խթանների բացակայությունը և տնտեսական ու առևտրային համագործակցության ավելի նեղ շրջանակը՝ «շուկայի հասանելիության» պայմանականությունը զգալիորեն ավելի «թույլ» է ՀԸԳՀ-ի դեպքում:

³⁶ Visa liberalisation with Moldova, Ukraine and Georgia, https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/visa-liberalisation-moldova-ukraine-and-georgia_en (15.03.2018).

373-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, «Եթե կողմերը համաձայնում են 6-րդ մասով³⁷ [այդ թվում ԵՄ օրենսդրությանը մոտարկումը] կարգավորվող անհրաժեշտ միջոցները կիրառված լինելու և տվյալ պահին իրականացվելու շուրջ, ապա Գործընկերության խորհուրդը [...] որոշում է ընդունում շուկայի հետագա բացման վերաբերյալ՝ 6-րդ մասով նախատեսված դեպքերում»:

6-րդ մասի համապատասխան դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ պայմանականության մեխանիզմներն ունեն հստակության տարբեր մակարդակներ: Օրինակ, հիմնադրման դեպքում³⁸ «հիմնադրման պայմաններն աստիճանական ազատականացնելու համար Գործընկերության կոմիտեն առևտրային հարցերով հանդիպելիս կանոնավոր կերպով վերանայում է իրավական շրջանակները և հաստատման միջավայրը»: Մակայն այս դեպքում հստակ սահմանված չեն Կողմերի պարտավորությունների կատարման գնահատման ճշգրիտ չափանիշները:

Ավելի հստակ է 152-րդ հոդվածը, որը վերաբերում է ծառայությունների միջսահմանային մատակարարմանը: Մասնավորապես, «Կողմերի միջև ծառայությունների միջսահմանային մատուցումն աստիճանաբար ազատականացնելու նպատակով Գործընկերության կոմիտեն առևտրային հարցերով հանդիպելիս պարբերաբար գնահատում է 149-ից 151-րդ հոդվածներում նշված հանձնառությունների ցանկը: Այդ գնահատումն իրականացնելիս հաշվի է առնվում, ի թիվս այլոց, 169-րդ, 180-րդ և 192-րդ հոդվածներում նշված աստիճանական մոտարկման գործընթացը և դրա ազդեցությունը Կողմերի միջև ծառայությունների միջսահմանային մատակարարման համար մնացյալ խոչընդոտների վերացման համար»: Վերոնշյալ հոդվածներով կարգավորվում է համապատասխանաբար փոստային ծառայությունների, էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և տրանսպորտային ծառայությունների վերաբերյալ ԵՄ նորմերին մոտարկումը:

³⁷ Առևտուր և առևտրին առնչվող հարցեր:

³⁸ Ծառայությունների առևտրի, հիմնադրման և էլեկտրոնային առևտրի մասին չՇԳՀ-ի 5-րդ գլուխ:

Օրենսդրական մոտարկման հարցն արժանի է հատուկ ուշադրության՝ հաշվի առնելով դրա դերը Համաձայնագրի նպատակների իրականացման գործում: Ստորև ներկայացվում են օրենսդրական մոտարկման մեխանիզմները:

Օրենսդրական մոտարկումը ՀԸԳՀ-ի շրջանակներում

ՀԸԳՀ-ում ամրագրված օրենսդրական մոտարկման մեխանիզմները նման են ԱՀ-ներում սահմանված մեխանիզմներին, թեև դրանք պակաս զարգացած և հավակնոտ են՝ ՀԸԳՀ-ի ավելի «համեստ» նպատակների պատճառով: Միաժամանակ, ի տարբերություն ԵՄ-Հայաստան ԳՀՀ-ի, որը ներառում է միայն մեկ ընդհանուր և ոչ պարտադիր իրավական ուժ ունեցող մոտարկման դրույթ³⁹, ՀԸԳՀ-ի մոտարկման մեխանիզմները զգալիորեն ավելի մշակված են, բազմազան և ամրագրված պարտադիր բնույթ ունեցող դրույթներում:

Չնայած ՀՀ օրենսդրական մոտարկման նախորդ փորձերին՝ ԳՀՀ-ի և ԵՀՔ Գործողությունների պլանի շրջանակներում, և օրենսդրական ու քաղաքական ոլորտներում արձանագրված որոշակի հաջողություններին (հատկապես՝ ձախողված ԱՀ-ի և ԽՀԱԱԳՀ-ի կնքման շուրջ բանակցությունները), այդ գործընթացը դժվար է որակել որպես հաջողված: Օրենսդրական մոտարկման գործընթացը զուրկ էր կապակցվածությունից, համակարգայնությունից և ընդհանուր մեթոդաբանական հիմքից: Բացի դրանից, ինչպես նշում են Ղազարյանը և Հակոբյանը, պետական մարմինների ձեռնարկված միջոցները հաճախ կրում էին ձևական բնույթ, թերի էին և մեծամասամբ ուղղված ԵՄ պահանջների տեխնիկական մասի բավարարմանը: Դատական իշխանության կողմից մոտարկված օրենսդրության պատշաճ կիրառման խնդիրը բխվել է Հայաստանի իրավական համակարգին բնորոշ և խորհրդային տարիներից ժառանգություն մնացած խնդիրներին⁴⁰:

³⁹ ԳՀՀ-ի 43-րդ հոդված:

⁴⁰ **Ghazaryan N., Hakobyan A.**, Legislative Approximation and Application of EU Law in Armenia. In: Legislative Approximation and Application of EU Law in the Eastern Neighbourhood of the European Union, Routledge, 2014, p. 214.

Ի տարբերություն ԳՀՀ-ների՝ ՀԸԳՀ-ի շրջանակներում ընդգծվում է ոչ միայն ԵՄ նորմերին Հայաստանի օրենսդրության աստիճանական մոտարկման, այլև մոտարկված օրենսդրության կիրառման և իրականացման կարևորությունը⁴¹: ՀԸԳՀ-ի 372-րդ հոդվածը սահմանում է մոտարկման գործընթացի մշտադիտարկման և գնահատման կոնկրետ մեխանիզմները, որոնք «վերաբերում են կիրառման և իրականացման ասպեկտներին (հոդված 372 (2))»: Բացի մոտարկման գործընթացում գրանցված առաջընթացի վերաբերյալ հաշվետվության ներկայացումից, գնահատումը «կարող է ներառել տեղում իրականացվող առաքելություններ՝ ԵՄ հաստատությունների, մարմինների և գործակալությունների, հասարակական կառույցների, վերահսկիչ մարմինների, անկախ փորձագետների և այլոց մասնակցությամբ (հոդված 372 (3))»:

Ինչպես ԱՀ-ների դեպքում է, ՀԸԳՀ-ի շրջանակներում առանձնացվում են օրենսդրական մոտարկման դրույթների երկու տեսակ՝ 1) մոտարկման մեխանիզմներ համագործակցության կոնկրետ ոլորտներում (տրանսպորտ, էլեկտրաներգիա, շրջակա միջավայր, զբաղվածություն, սոցիալական քաղաքականություն, հավասար հնարավորություններ և այլն), 2) հորիզոնական դրույթներ, որոնք լրացնում են առանձին ոլորտների մոտարկման մեխանիզմները:

Դրույթների առաջին խմբում կարելի է տարբերակել իրավական մոտարկման հետևյալ տեսակները.

- Դրույթներ, որոնցում պահանջվում է միջազգային փաստաթղթերի կիրառում և միջազգային չափանիշներին համապատասխանություն: Այդ պարտավորությունները կարող են լինել ընդհանուր⁴² կամ մասնավոր⁴³:

⁴¹ ՀԸԳՀ-ի նախաբան և 372-րդ հոդված:

⁴² Օրինակ, անձնական տվյալների պաշտպանության մասին 13-րդ հոդվածով Կողմերը անձնական տվյալների բարձր մակարդակով պաշտպանությունն ապահովելու նպատակով համաձայնում են համագործակցել՝ Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային կառույցների միջազգային իրավական փաստաթղթերին և չափանիշներին համապատասխան: Ըստ Պետական հատվածի ներքին հսկողության և առողիտի միջոցառումների վերաբերյալ 24-րդ հոդվածի, Կողմերը պետք է համագործակցեն պետական հատվածի ներքին

- Դրույթներ, որոնցում ներառված է ԵՄ նորմերին մոտարկման պահանջ՝ առանց համապատասխան ակտերի հստակեցման: Այդպիսի պահանջների ձևակերպումն ու պարտադիր բնույթը տարբերվում են: Ըստ Առևտրին և առևտրին առնչվող հարցերի մասին 6-րդ մասի 169-րդ, 180-րդ և 192-րդ հոդվածների, որոնք կարևոր նշանակություն ունեն ծառայությունների միջսահմանային մատուցման ազատականացման համար, «Կողմերը ճանաչում են փոստային ծառայության, էլեկտրոնային առևտրի և տրանսպորտային ծառայությունների վերաբերյալ ԵՄ նորմերին Հայաստանի աստիճանական մոտարկման կարևորությունը»: Ըստ 189-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետությունը պետք է *համապատասխան ձևով* իրականացնի ֆինանսական ծառայությունների իր կարգավորումների մոտարկումը Եվրոպական միության օրենսդրությանը»: Ըստ Առևտրի տեխնիկական խոչընդոտների հարցերով համագործակցության վերաբերյալ 130-րդ հոդվածի, «Կողմերը պետք է նախաձեռնեն և իրականացնեն այնպիսի գործընթաց, որով կարելի է հասնել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության տեխնիկական կանոնակարգերի, չափանիշների ու համապատասխանության գնահատման ընթացակարգերի աստիճանական մոտարկման»: Սպառողների պաշտպանության վերաբերյալ 81-րդ հոդվածի համաձայն, «Կողմերը պետք է համագործակցեն՝ սպառողների

հսկողության և արտաքին աուդիտի ոլորտներում՝ հետևյալ նպատակով. «Ապակենտրոնացված կառավարչական հաշվետվողականության սկզբունքին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում ամբողջ պետական հատվածի համար անկախ ներքին աուդիտի գործառույթին համապատասխան՝ պետական ներքին հսկողության համակարգի հետագա զարգացումը և կիրառումը՝ համընդհանուր ընդունված միջազգային չափանիշների, շրջանակային հայեցակարգերի և ուղեցույցների ու Եվրոպական միության պատշաճ գործելակերպի հետ մոտարկմամբ՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հավանության արժանացած՝ պետական ներքին ֆինանսական հսկողության բարեփոխումների ծրագրի հիման վրա»:

⁴³ Օրինակ, մտավոր սեփականության ոլորտում կոնկրետ կոնվենցիաների իրականացում պահանջող դրույթները:

- պաշտպանության բարձր մակարդակ և սպառողների պաշտպանության *իրենց համակարգերի միջև համատեղելիության* ապահովման համար»: 70-րդ հոդվածը սահմանում է, որ «Կողմերը պետք է համագործակցեն գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացումը խթանելու գործում՝ մասնավորապես քաղաքականությունների և օրենսդրության *աստիճանական մոտարկման* միջոցով»: Կան նաև մի շարք դրույթներ, որոնք հիմնված են «հաշվի առնելով» և «ջանքեր գործադրելով» մոտեցումների վրա⁴⁴:
- Ստանդարտ մոտարկման դրույթներ, որոնցում մատնանշված են ԵՄ կոնկրետ ակտեր և համաձայնագրի հավելվածներում սահմանված են դրանց իրականացման ժամկետները⁴⁵:

⁴⁴ Ըստ ՀԸԳՀ-ի 4-րդ մասի 3-րդ գլխի 30-րդ հոդվածի, «Ազգային վիճակագրական համակարգի միջոցով պետք է պահպանվեն ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները և **հաշվի առնվի** վիճակագրության ոլորտի ԵՄ օրենսդրությունը՝ ներառյալ Եվրոպական վիճակագրության գործավարության կանոնագիրքը՝ ազգային վիճակագրական տվյալների ձևավորումը եվրոպական նորմերի և ստանդարտների հետ համապատասխանեցնելու նպատակով»: ՀԸԳՀ-ի 33-րդ հոդվածի համաձայն, «**Ջանքերը պետք է ուղղվեն վիճակագրությանն առնչվող ԵՄ օրենսդրության հետ հետագա համապատասխանեցմանը**՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության վիճակագրական համակարգի զարգացման ազգային ռազմավարության վրա և հաշվի առնելով Եվրոպական վիճակագրական համակարգի զարգացումը»: ՀԸԳՀ-ի 35-րդ հոդվածի համաձայն, «Հայաստանի Հանրապետության օրենսդրության աստիճանական մոտարկումը վիճակագրությանն առնչվող ԵՄ օրենսդրությունը պետք է իրականացվի Եվրոստատի կողմից ստեղծված՝ ամեն տարի թարմացվող Վիճակագրական պահանջների ժողովածուի համաձայն, որը Կողմերը համարում են Համաձայնագրի հավելված»:

⁴⁵ Դրանք են՝ 41-րդ հոդվածն 1-ին հավելվածով (տրանսպորտ), 44-րդ հոդվածը 2-րդ հավելվածով (էլեկտրաէներգիա), 50-րդ հոդվածը 3-րդ հավելվածով (շրջակա միջավայր), 56-րդ հոդվածը 4-րդ հավելվածով (կլիմա), 65-րդ հոդվածը 5-րդ հավելվածով (տեղեկատվական հասարակություն), 83-րդ հոդվածը 6-րդ հավելվածով (սպառողների պաշտպանություն), 90-րդ հոդվածը 7-րդ հավելվածով (գրադվածություն,

Այդպիսի դրույթներ կան ՀՀԳՀ-ի 5-րդ մասում (Համագործակցությանն առնչվող այլ քաղաքականություններ) և ֆինանսական աջակցության և խարդախության դեմ պայքարի ու վերահսկողության վերաբերյալ 7-րդ մասում: Դրանք չեն հանգեցնում շուկայի բացմանը, սակայն կարող են լինել այլ պայմանականության մեխանիզմների տարրեր: ԵՄ-ի գործողությունների ցանկը, որը ներկայացված է հավելվածներում, ներառում է ԵՄ իրավունքի աղբյուրներ, ինչպես նաև կանոնակարգեր և ցուցումներ: Թեև ԵՄ իրավունքի համատեքստում այդ ակտերի միջև տարբերությունը զգալի է (դա առաջին հերթին վերաբերում է այդ ակտերի անմիջական ազդեցությանը և կիրառելիությանը), օրենսդրական մոտարկման նպատակների համար այս տարբերությունն աննշան է, քանզի գործողությունների երկու տեսակներն էլ պետք է ներմուծվեն ներպետական իրավական համակարգ և ուղղակիորեն կիրառելի չեն: Ավելին, ի տարբերություն ԵՄ անդամ երկրների, Հայաստանի պարտավորությունները կարող են սահմանափակվել կոնկրետ դրույթների իրականացմամբ, այլ ոչ համապատասխան ԵՄ ակտերի ամբողջությամբ⁴⁶:

սոցիալական քաղաքականություն և հավասար հնարավորություններ), 361-րդ հոդվածը 12-րդ հավելվածով (խարդախության դեմ պայքար)

⁴⁶ Դա պայմանավորված է մոտարկման առանձնահատուկ բնույթով՝ ի տարբերություն ԵՄ-ի ներսում տեղի ունեցող իրավական գործընթացների: Ինչպես նշում է Մատտան, կան նորմերի/արժեքների արտահանման տարբեր մեթոդներ կամ մոդելներ՝ կախված ինտեգրման կոնկրետ նպատակներից, որոնք սահմանված են համապատասխան համաձայնագրերում: Դրանք կարող են լինել համակարգային և խիստ մեթոդներ, օրինակ՝ միատարրությունը, փոխադարձ ճանաչումը և պարտադիր ներդաշնակեցումը (ուղղված Միությանն անդամակցությանը) և ավելի հաճախ կիրառվող և պակաս հավակնոտ ԵՄ օրենսդրությանը մոտարկման պահանջը: (**Matta A.**, Differentiating the methods of acquis export, In: Legislative Approximation and Application of EU Law in the Eastern Neighbourhood of the European Union, Routledge, 2014, p. 35). Ինչպես մոտարկումն, այնպես էլ ներդաշնակեցումը (ի տարբերություն միատարրությանը և ճանաչմանը) կարող են տարբերվել իրենց նպատակներով և ինտենսիվությամբ՝ կախված այն բանից, թե ինչ համատեքստում են օգտագործվում: Մոտարկման դեպքում դա

Համագործակցության այլ ոլորտները (ընկերությունների մասին օրենք, հաշվապահական հաշվառում և աուդիտ, կորպորատիվ կառավարում, արդյունաբերական և ձեռնարկատիրական քաղաքականություն, համագործակցություն բանկային, ապահովագրական և այլ ֆինանսական ծառայությունների ոլորտներում) չեն ենթադրում օրենսդրական մոտարկում: Սակայն, Հայաստանի իրավական համակարգը կարող է շահել ազգային օրենսդրության բարելավումից՝ տեղեկատվության փոխանակման և լավագույն պրակտիկաների միջոցով: Օրենսդրական մոտարկումը կարող է իրականացվել նաև կամավոր հիմունքներով և ՀՀԳՀ-ի ֆորմալ պահանջների շրջանակից դուրս:

Երկրորդ խումբը («հորիզոնական» օրենսդրական մոտարկման դրույթներ) ներառում է, ի թիվս այլոց, 370-րդ հոդվածը, ըստ որի Հայաստանի Հանրապետությունը պետք է իրականացնի իր օրենսդրության աստիճանական մոտարկում ԵՄ օրենսդրությանը՝ ինչպես նշված է Հավելվածներում՝ հիմք ընդունելով Համաձայնագրով նախատեսված հանձնառությունները, և այդ Հավելվածների դրույթների համաձայն: Այդ հոդվածը չի հակասում 6-րդ մասով նախատեսված որևէ հատուկ դրույթի: 371-րդ հոդվածը վերնագրված է «Դինամիկ մոտարկում»⁴⁷: Այն սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը աստիճանական մոտարկման նպատակին համահունչ՝ Գործընկերության խորհուրդը պարբերաբար դիտարկում և թարմացնում է Համաձայնագրի հավելվածները՝ ԵՄ օրենսդրության զարգացումը և մասնակիցների կողմից պատշաճ համարվող միջազգային փաստաթղթերով սահմանված կիրառելի ստանդարտներն արտացո-

պայմանավորված է ինտեգրման նպատակների մակարդակով և ինտենսիվությամբ, այդ թվում՝ համատեղելիություն, կոնվերգենցիա, ներգրավված դերակատարների դիրքորոշում: (**Matta A.**, նշվ. աշխ., էջ 37-38):

⁴⁷Հիմնվելով այս դրույթի և երրորդ երկրների հետ այլ համաձայնագրերի համապատասխան դրույթների համեմատական վերլուծության վրա՝ կարելի է պնդել, որ այդ մեխանիզմը հաստատուն է, այլ ոչ՝ դինամիկ: (**Van Der Loo G.**, *The EU-Ukraine DCFTA*, In: *Legislative Approximation and Application of EU Law in the Eastern Neighbourhood of the European Union*. Routledge, 2014, p. 78).

լելու նպատակով՝ հաշվի առնելով Կողմերի համապատասխան ներքին ընթացակարգերի կատարումը»: Հղում անելով նախադեպային իրավունքին՝ Սահմանադրական դատարանը սահմանում է, որ հավելվածների նման վերանայումը կոլիտարկվի որպես Համաձայնագրի փոփոխություն և կպահանջի վավերացում այն նույն սկզբունքով, որը գործում է Համաձայնագրի դեպքում⁴⁸:

ՀԸԳՀ-ի 169-րդ, 180-րդ և 192-րդ հոդվածներով (սակայն հստակեցված չէ մոտարկման ուղղությամբ ԵՄ գործողությունների ցանկը) սահմանված օրենսդրական մոտարկման մեխանիզմները ենթադրում են վեճերի լուծման հատուկ ընթացակարգ: Մասնավորապես, 342-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ վեճի արդյունքում Եվրոպական միության օրենսդրության դրույթի մեկնաբանության հարց առաջանալու դեպքում արբիտրաժային կոլեգիան դիմում է Եվրոպական միության արդարադատության դատարան՝ տվյալ հարցի վերաբերյալ ընթացակարգային որոշում կայացնելու համար՝ պայմանով, որ այդ հարցն անհրաժեշտ է արբիտրաժային կոլեգիայի որոշման համար: [...] Արդարադատության դատարանի որոշումը պարտադիր է արբիտրաժային կոլեգիայի համար⁴⁹:

Այդպիսի մեխանիզմներ (թեև դրույթների ավելի լայն ցանկով, որոնց դեպքում գործում է վեճերի կարգավորման հստակ ընթացակարգ) գործում են նաև ԱՀ-ների շրջանակում՝ ԱլԳ անդամ երկրների առնչությամբ: Հատկանշական է, որ ի տարբերություն ՀԸԳՀ-ի, այդ դրույթները պարունակում են ԵՄ ակտերի ցանկ, որն անհրաժեշտ է փոխանցել: Ինչպես նշում է Վան Դեր Լուն Ուկրաինայի ԱՀ-ի առնչությամբ, հաստատված մեխանիզմը նորույթ է ԵՄ երկկողմ հարաբերությունների պրակտիկայում և կոչված է ապահովելու այդ հարաբերություններում ԵՄ օրենսդրության միասնական մեկնաբանություն:

ՀԸԳՀ-ի կենտրոնացումը օրենսդրության մոտարկման իրականացման և կիրառման վրա ընդգծում է դատական համակարգի

⁴⁸ 2017 թվականի նոյեմբերի 24-ին Բրյուսելում ստորագրված... 11-րդ պարբերություն:

⁴⁹ Van Der Loo G., նշվ. աշխ., էջ 82:

նշանակությունը Հայաստանի իրավական համակարգի եվրոպակա-նացման գործընթացում: Թեև ՀԸԳՀ-ում չկա նման պահանջ, սակայն ՀՀ օրենսդրության մոտարկման իրականացումն ապահովելու նպատակով դատավորները պետք է հաշվի առնեն ԵՄ Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքը: Դատական փաստարկումներում ԵՄ Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքի կիրառումը կարող է դյուրացվել որոշ օրենսդրական մեխանիզմների մշակման ճանապարհով: Մասնավորապես, համապատասխան ԵՄ ակտերին վերաբերող հղումները ներպետական օրենսդրության նախաբանում կարող են հիմք հանդիսանալ այդ նորմերի և դրանք մեկնաբանող նախադեպային իրավունքի կիրառման համար՝ նպատակային և «օրենսդիրների մտադրությունների» մոտեցումների հիման վրա փաստարկներ կառուցելու համար⁵⁰: Ինչպես ՄԻԵԴ-ի վճիռների դեպքում է, ԵՄ Արդարադատության դատարանի վճիռների կիրառումը կլինի խնդրահարույց ներպետական դատական իշխանության համար: Մասնավորապես, նախադեպային իրավունքը կիրառումը կպահանջի ոչ միայն հստակ գիտելիքներ և հմտություններ, այլ նաև իրավական մտածողության փոփոխություն՝ հիմնված խորհրդային ժամանակա-շրջանից ժառանգած իրավական պոզիտիվիզմի փիլիսոփայության վրա⁵¹:

Հարկ է նշել, որ բացի կոնկրետ ոլորտներում օրենսդրական մոտարկման պահանջներից կան նաև այլ պարտավորություններ, որոնք ուղղված են Հայաստանում օրենսդրական կարգավորման բարելավմանը: Ըստ 308-րդ հոդվածի, «ընդունելով իրենց համապատասխան նորմատիվ-իրավական դաշտի՝ միմյանց միջև

⁵⁰ Այդ օրենսդրական մեխանիզմը կիրառվում է, օրինակ, Սուլդովայում: (**Khvorostiankina A.**, “Legislative Approximation and Application of EU Law in Moldova” In: *Legislative Approximation and Application of EU Law in the Eastern Neighbourhood of the European Union. Towards a Common Regulatory Space?* Edited by Roman Petrov, Peter Van Elsuwege, Routledge, 2014, pp. 159-178).

⁵¹ **Kühn Z.**, The Application of European Law in the New Member States: Several (Early) Predictions, *German Law Journal*, 2005, 6, 3, 563- 582, p. 564; **Meleshevych A., Khvorostyankina A.**, ‘Ukraine’, in: L. Hammer and F. Emmert (eds), *The European Convention on Human Rights and fundamental freedoms in Central and Eastern Europe*, The Hague: Eleven International Publishing, 2012, pp. 557-596.

առևտրի և ներդրումների վրա ունեցող ազդեցությունը՝ Կողմերը տնտեսական օպերատորների, մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկատիրությունների համար ապահովում են *կանխատեսելի նորմատիվ-իրավական դաշտ և արդյունավետ ընթացակարգեր*»։ Ըստ 313-րդ հոդվածի, Կողմերը պետք է համագործակցեն նորմատիվ-իրավական կարգավորումների որակը և արդյունավետությունը խթանելու, ինչպես նաև վարչական բարեվարքության սկզբունքները պահպանելու հարցում։ ՀՀԳՀ-ի 6-րդ մասը (Առևտուր և առևտրին առնչվող հարցեր) սահմանում է *իրավական որոշակիությունը*։ Մասնավորապես, ըստ 309-րդ հոդվածի առաջին կետի, յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ընդհանուր կիրառության միջոցները⁵²

1. պաշտոնապես սահմանված, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակներով, *անմիջապես և հեշտությամբ հասանելի դառնան* այնպես, որ ցանկացած անձ կարողանա ծանոթանալ դրանց,
2. պարունակեն դրույթներ, որոնցում *հնարավորինս հստակ նշվում են այդ միջոցների ընդունման նպատակը և հիմնավորումները*,
3. այդ միջոցների հրապարակումից հետո դրանք ուժի մեջ մտնելու համար նախատեսեն *բավարար ժամկետ՝ բացառությամբ պատշաճ հիմնավորված դեպքերի*։

Այդ դրույթներն, անկասկած, կարող են դրականորեն ազդել ՀՀ իրավական համակարգի զարգացման վրա՝ դրանց լիարժեք և պատշաճ կիրառման դեպքում։ Դա կպահանջի ինչպես օրենսդրական մեխանիզմների բարելավում, այնպես էլ վարչական ու դատական ընթացակարգերի բարձր չափանիշների սահմանում և պահպանում։

⁵² ՀՀԳՀ-ի 307-րդ հոդվածը սահմանում է, որ «*«ընդհանուր կիրառության միջոցները» ներառում են ընդհանուր կիրառության այն օրենքները, կանոնակարգերը, որոշումները, ընթացակարգերը և վարչական ակտերը, որոնք կարող են ազդեցություն ունենալ սույն Համաձայնագրով կարգավորվող ցանկացած հարցի վրա*»։

Եզրակացություն

ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը եզակի իրավական գործիք է, որով կարգավորվում է ԵՄ-ի և մեկ այլ տնտեսական ինտեգրման կառույցի՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրի միջև հարբերությունները: Հայաստանի մասնակցությունը ԵԱՏՄ-ին առաջ բերեց ԵՄ-Հայաստան չստորագրված Ասոցացման համաձայնագրի տեքստը վերանայելու անհրաժեշտություն՝ հաշվի առնելով ԵԱՏՄ-ի մասին համաձայնագրով ստանձնած միջազգային պարտավորությունները: Արդյունքում, նոր համաձայնագիրը՝ ՀՀԳՀ-ն, չի նախատեսում ԽՀԱԱԳՀ-ի ստեղծում: Վերջինս առավել կարևոր խթաններից է, որը ԵՄ-ն առաջարկում է երկրներին՝ առանց անդամակցության հեռանկարների և ձգտումների: Դա, անկասկած, թուլացնում է ԵՄ նորմերի և արժեքների ներմուծման մեխանիզմները՝ ի տարբերություն Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ կնքած ԱՀ-ների: Բացի այդ, ինչպես ՀՀԳՀ-ի, այնպես էլ ԵԱՏՄ-ի մասին համաձայնագրում սահմանված դրույթների կիրառման ժամանակ հնարավոր է, որ դրանց միջև ծագեն իրավական հակասություններ, որոնց լուծման համար կպահանջվի կիրառել ներպետական իրավական մեխանիզմներ:

Այդուհանդերձ, ՀՀԳՀ-ի փոխակերպող ներուժը բավական մեծ է: Բացի ԵՄ օրենսդրությանը մոտարկման ճանապարհով ներպետական օրենսդրական կարգավորման բարեփոխումից, իրավական որոշակիություն և կանխատեսելիություն, կարգավորման որակ, թափանցիկություն, լավ վարչական վարքագիծ պահանջող դրույթների պատշաճ և լիարժեք իրականացումն, ակնհայտորեն, կնպաստի Հայաստանի իրավական համակարգի հետագա բարելավմանը: Դա հնարավոր է իրականացնել պահանջվող բարեփոխումների իրականացման գործընթացին համապարփակ և համակարգային պետական մոտեցումների պայմաններում:

Համաձայնագրի պատշաճ իրականացումն ապահովելու գործում վճռորոշ դերակատարություն ունի Հայաստանի դատական համակարգը, քանզի ՀՀԳՀ-ում ընդգծվում է օրենսդրության մոտարկման իրականացման և կիրառման կարևորությունը, ինչպես

նաև դատական ընթացակարգերի բարձր չափանիշների պահպանումը՝ իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա: Ակնհայտ է, որ ՀՀԳՀ-ի նպատակների (այդ թվում՝ տնտեսական ոլորտի նպատակների) իրագործումը հնարավոր չէ առանց մարդու իրավունքների պաշտպանության և արդար դատաքննության երաշխիքների պատշաճ մակարդակի: Ուստի, կպահանջվեն դատական համակարգի համակարգային փոփոխություններ: Բացի այդ, ՀՀԳՀ-ի իրականացումը ՀՀ դատավորներից պահանջելու է նոր հմտություններ, գիտելիքներ և մեթոդաբանական մոտեցումներ: Դա պայմանավորված է, մասնավորապես, ԵՄ Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքը հաշվի առնելու անհրաժեշտությամբ: Թեև ՀՀԳՀ-ում նշված չէ այդպիսի պահանջ (ի տարբերություն ԱՀ-ների և մի քանի այլ ԵՄ արտաքին համաձայնագրերի), այդուհանդերձ դա կարող է լինել կարևոր «եվրոպականացված» օրենսդրության պատշաճ կիրառման և մեկնաբանության համար:

EU-Armenia Comprehensive and Enhanced Partnership Agreement: What Does It Mean for Armenian Legal System?

ANNA KHVOROSTIANKINA

National University of “Kyiv-Mohyla Academy”, Ukraine

Brusov State University of Languages and Social Sciences, Armenia

This article provides the legal analysis of the newly signed EU-Armenia Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA) and characterizes its potential influence on the Armenian legal system. In particular, the author focuses on CEPA's place in the domestic legal order (with specific attention paid to the status and the mechanisms of implementation of the binding decisions of the institutions established by the Agreement), the institutional framework of partnership under CEPA, essential elements and conditionality mechanisms of the Agreement, as well as mechanisms of legislative approximation to the EU acquis. Being signed with a country-participant of the Eastern Partnership (EaP) which, at the same time, is a member of the Eurasian Economic Union, CEPA is a unique legal instrument. Within the EaP region, it significantly differs from both Partnership and Cooperation Agreements (PCAs) concluded with the post-Soviet countries in 90s and Association Agreements (AAs) of new generation signed with Georgia, Moldova and Ukraine. The article makes an attempt to outline the main differences between CEPA and other EU agreements with third countries. It is shown, in particular, that in the same way as AAs with Georgia, Moldova and Ukraine, CEPA contains two types of conditionality mechanisms: “common values” conditionality and “market access” conditionality. These two types of conditionality serve to export EU values in the former case, and EU acquis (as a set of rules) in the latter case. It is argued that, in order to promote “common” values in Armenian legal order, CEPA uses the following instruments: incorporating values into the so called essential element clauses; requiring to join to and implement relevant international agreements and making the implementation of values an element of conditionality mechanisms. One of the main elements of ‘market’ conditionality is the requirement to implement relevant legal reforms, in particular, through gradual approximation of Armenian legislation to the EU acquis. The author distinguishes three types of mechanisms of legislative approximation employed by CEPA and provides their detailed characteristic. Furthermore, it is argued that, in addition to the approximation commitments, other requirements (e.g. the requirement of predictability of legal regulation and legal certainty) can also stimulate further development of Armenian legal system. The author underlines the role of judiciary in ensuring proper implementation of the Agreement.